ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4291-Ա « 03 »սեպտեմբերի 2026 թ.

ՀԱՂԹԱՆԱԿ 3-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 89, ՀԱՂԹԱՆԱԿ ՏԵՂԱՄԱՍԻ ԹԻՎ 23-4 ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿ ՏԵՂԱՄԱՍԻ ԹԻՎ 23-4Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐ ԹՈՂԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել Մարետա Սարգսյանի և Դավիթ Դավթյանի լ/ա Անահիտ Հովհաննիսյանի դիմումը՝ Հաղթանակ 3-րդ փողոցի թիվ 89 (տնամերձ), Հաղթանակ տեղամասի թիվ 23-4 (պտղատու այգի) և Հաղթանակ տեղամասի թիվ 23-4ա (անօգտագործելի հող) հասցեներում գտնվող հողամասերի սահմանները ճշտելու և հատակագծեր թողարկելու մասին:

Հարցի քննարկման համար հիմք են հանդիսացել հողի սեփականության իրավունքի 17.02.1995թ. հ.Ա001390 պետական ակտը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի հ.հ.4220, 808 և ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ հ.հ.809 և 3096 վկայագրերը:

Հարցի ուսումնասիրությունից և տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Հաղթանակ 3-րդ փողոցի թիվ 89 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 400.0քմ՝ որքան ամրագրված է հողի սեփականության իրավունքի 17.02.1995թ. հ.Ա001390 պետական ակտում, Հաղթանակ տեղամասի թիվ 23-4 հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 5122.8քմ՝ հողի սեփականության իրավունքի 17.02.1995թ. հ.Ա001390 պետական ակտում ամրագրված՝ 6000.0քմ մակերեսի փոխարեն, իսկ Հաղթանակ տեղամասի թիվ 23-4ա հասցեում գտնվող հողամասի մակերեսը փաստացի կազմում է 2000.0քմ՝ որքան ամրագրված է հողի սեփականության իրավունքի 17.02.1995թ. հ.Ա001390 պետական ակտում:

Հաղթանակ 3-րդ փողոցի թիվ 89 հասցեում գտնվող 400.0քմ մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում է 9-րդ գոտում, իսկ Հաղթանակ տեղամասի թիվ 23-4 /5122.8քմ/ և Հաղթանակ տեղամասի թիվ 23-4ա /2000.0քմ/ մակերեսներով հողամասերն ըստ Երևան քաղաքի հողերի տարածագնահատման համաձայնեցված սխեմայի գտնվում են 12-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի

3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 2026 թվականի հուլիսի 9-ի հ.Դ-65302-26 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Հաղթանակ 3-րդ փողոցի թիվ 89 հասցեում գտնվող հողամասի (տնամերձ) սահմանները որոշվում են 400.0քմ, Հաղթանակ տեղամասի թիվ 23-4 հասցեում գտնվող հողամասի սահմանները՝ 5122.8քմ (պտղատու այգի) և Հաղթանակ տեղամասի թիվ 23-4ա հասցեում գտնվող հողամասի սահմանները՝ 2000.0քմ (անօգտագործելի հող) մակերեսների համար սահմանված կարգով հաստատված հատակագծերով:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեում:

3.Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ